CONTOURGLOBAL
HYDRO CASCADE

## Մասնակցության հրավեր

**Պատվիրատու՝** «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ Պատվիրատու, հրավիրում է հայտատուներին ներկայացնել հայտեր «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Սպանդարյան և Ծամբ ՀԷԿ-երի համար գծային անջատիչների մատակարարման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման բաց մրցույթի հետ կապված գնումների համար:

**Բաց մրցույթի հղման համար** ՝ «ՔԳՀԿ 14/25»

**Երկիրը՝** Հայաստան

**Մրցույթի մեկնարկի ամսաթիվ՝** 9 սեպտեմբեր 2025 թ.

Հարգելի գործընկերներ,

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն (Պատվիրատու), հայտարարում է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Սպանդարյան և Ծամբ ՀԷԿ-երի համար գծային անջատիչների մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացման համար փորձառու հայտատուի ընտրության մրցույթ:

1. Բաց մրցույթը կիրականացվի մեկ փուլով: Հայտատուները տեխնիկական և ֆինանսական առաջարկները ներկայացնում են միաժամանակ մեկ փակ ծրարով Coupa էլ. գնումների համակարգի միջոցով (Coupa Supplier Portal (coupahost.com)): ՀՀ ռեզիդենտները փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային ստորագրության միջոցով, իսկ ոչ ռեզիդենտները՝ բնօրինակից սկանավորված տարբերակով:

2. Գնման ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են՝ ՀՀ Ֆինանսների նախարարության հրապարակած՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հղում), և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հղում):

3. Հայտատուները պետք է իրենց առաջարկները ներկայացնեն էլեկտրոնային եղանակով՝ օգտագործելով Coupa համակարգը և հաշվի առնելով Coupa-ի օգտագործման պայմանները, ինչպես նաև սույն փաստաթղթով սահմանված բաց մրցույթի պայմանները:
4. Հայտերը կբացվեն և կգնահատվեն մրցութային փաթեթի պահանջների համապատասխան: Ցանկացած տեխնիկական առաջարկ, որը չի բավարարի մրցութային փաթեթի և/կամ տեխնիկական բնութագրի պահանջներին, կհամարվի չհամապատասխանող: Աշխատանքների տևողությունը 270 օր է՝ սկսած պայմանագրի կնքման օրվանից:
5. Առաջարկների ներկայացման վերջնաժամկետը 2025 թվականի հոկտեմբերի 22-ը, 17:00-ն, Երևանի ժամանակով: Հետաքրքրված ընկերությունները կարող են լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ ստանալ սույն բաց մրցույթի

վերաբերյալ՝ իրենց առաջարկները ուղարկելով գնումների ավագ մասնագետ Ա. Պետրոսյան arman.petrosyan@contourglobal.com հասցեին, Հեռ +37411520029: Հայտատուները, ովքեր հետաքրքրված են այս գնումով, կարող են գրել. arman.petrosyan@contourglobal.com նշելով իրենց էլ. հասցեն հաստատել իրենց հետաքրքրությունը և ստանալ Coupa համակարգին մասնակցելու հրավեր:

6. Մրցութային փաթեթը կազմվել է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Գնումների ընթացակարգին համապատասխան և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի 273Ա որոշմամբ (https://eservices.contourglobal.eu/armenia/): Բաց մրցույթը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների ընթացակարգի համաձայն: Սույն մրցույթից բխող վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Մրցութային փաթեթին ամբողջությամբ անվճար կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով. https://contourglobal-my.sharepoint.com/:f:/p/arman_petrosyan/EjPhbW0NO49JucfANKmv7JsBC0ABrBT0HA2_9lQ7OFkiLw?e=Xo2Wlq .